ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ
ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ

Լիտվայի Հանրապետության պետական արտոնագրային բյուրոն (ՊԱԲ) եւ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը (ՄՍԳ), այսուհետ՝ «Գերատեսչությունները»,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ.

որ արդյունաբերական սեփականությունը կենսական դեր ունի ազգային հարստության կերտման մեջ, սատարելով ստեղծագործական աշխատանքը եւ խթանելով ժամանակակից տեխնոլոգիաների ձեռքբերումն ու փոխանցումն աշխարհով մեկ,

արդյունաբերական սեփականության իրավունքների պահպանությունն ուժեղացնելու եւ իրենց երկրների արդյունաբերության, մասնավորապես՝ արդյունաբերական սեփականության իրավունքների պահպանության համար դիմող փոքր եւ միջին ձեռնարկությունների համար ավելի բարենպաստ տնտեսական պայմաններ ստեղծելու երկու երկրների ձգտումը,

արդյունաբերական սեփականության պահպանության գործնական եւ կազմակերպչական հայեցակետներում ՊԱԲ եւ ՄՍԳ միջեւ արդյունավետ համագործակցությունը շարունակելու ցանկությունը,

արդյունաբերական սեփականության իրավունքների պահպանության ինչպես նաեւ կանոնավոր ձեւով արդյունաբերական սեփականության պահպանության ընթացակարգերի եւ գործնական աշխատանքների վերաբերյալ կարծիքների փոխանակման եւ տեղեկատվության համալրման, Գերատեսչությունների գործառույթների իրականացման համար արդյունավետ պայմաններ ստեղծող տեղեկատվական տեխնոլոգիաների՝ արդյունաբերական սեփականության բնագավառում օգտագործելու հարցում ջանքերի երկուստեք միավորման ցանկությունը,

այն համոզմունքը, որ երկկողմ հարաբերությունների ստեղծումը պատշաճ է այս նպատակների իրականացման համար, եւ այդպիսի երկկողմ հարաբերությունները Գերատեսչությունների միջեւ վնաս չեն հասցնում Գերատեսչությունների գործող կամ հետագա փոխադարձ կամ երկկողմ համագործակցության հարաբերություններին,

որ ՊԱԲ եւ ՄՍԳ ունեն հումանիտար, տեխնիկական եւ նյութական միջոցներ սույն Հուշագրով սահմանված նպատակների եւ պարտավորությունների կատարման համար,

ԵԿԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆԸ.

Հոդված 1
Արդյունաբերական սեփականության պրակտիկան

Գերատեսչությունները միմյանց տեղեկացնում են արդյունաբերական սեփականության օբյեկտների փորձաքննության եւ գրանցման վերաբերյալ իրենց համապատասխան պրակտիկայի մասին: Մասնավորապես, նրանք պետք է փոխանակեն դասակարգման, որոնման, փորձաքննության, բողոքարկման ընթացակարգերի եւ որակի հսկողության վերաբերյալ փորձն ու կարծիքները:

Հոդված 2
Տեղեկատվական համակարգերի տեղեկատվության փոխանակում

1. Գերատեսչությունները փոխանակում են տվյալների մշակման միացյալ համակարգի, մասնավորապես՝ տեխնիկական հայեցակետերի, գրանցման գործընթացի եւ տեղեկատվության հոսքի ավտոմատացման, արդյունաբերական սեփականության հայտերի էլեկտրոնային ձեւով ներկայացման, որոնման խնդրագրի եւ որոնման արդյունքների հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվությունը:
2. Գերատեսչությունները միմյանց են տրամադրում իրենց որոնման չափանիշների եւ արդյունաբերական սեփականության օբյեկտների նկատմամբ հնարավոր խախտումների կանխման ռազմավարության վերաբերյալ տեղեկատվություն:
3. Գերատեսչությունները միմյանց են տրամադրում արդյունաբերական սեփականության օբյեկտների դասակարգման եւ գրանցման գործընթացների համար օգտագործվող էլեկտրոնային միջոցների հնարավոր զարգացման վերաբերյալ տեղեկատվություն:

Հոդված 3
Փորձագետների փոխանակում

1. Գերատեսչությունները համաձայնում են տեխնիկական համագործակցություն սկսել արդյունաբերական սեփականության պահպանության բնագավառում, կազմակերպելով տեխնիկական ուսուցում եւ տեղեկատվական միջոցառումներ, դասընթացներ եւ սեմինարներ:
2. Գերատեսչությունները համագործակցում են իրենց համապատասխան Գերատեսչություններում փորձագետների փոխանակման միջոցով գործնական ուսուցման ծրագրեր իրականացնելով:

Հոդված 4
Փոխանակման գործողություններ

Գերատեսչությունները միավորում են իրեն ջանքերը փոխադարձ ձեւով խթանելու գիտելիքների խորացման եւ մասնակցելու իրենց համապատասխան երկրներից դուրս՝

արդյունաբերական սեփականության ազգային համակարգերին ծանոթանալու համար նախատեսված գործողություններին եւ միջոցառումներին:

Հոդված 5
Օրենսդրական հարցեր

Գերատեսչությունները միմյանց տեղեկացնում են հիմնական օրենսդրական հարցերի, մասնավորապես՝ նոր օրենսդրական մշակումների, դատավարական պրակտիկայի մասին:

Հոդված 6
Հանդիպումները Գերատեսչություններ միջեւ

Արդյունաբերական սեփականության իրավունքների վերջին զարգացումների վերաբերյալ կանոնավոր ձեւով տեղեկացված լինելու համար Գերատեսչությունները հանդիպում են Վիլնյուսում (Լիտվա) կամ Երեւանում (Հայաստան): Հանդիպումների հաճախականությունը եւ թվականները որոշվում են փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 7
Նամակագրությունը

Սույն համաձայնագրի կատարմանը վերաբերող ամբողջ հաղորդակցությունը կատարվում է գրավոր եւ հղումը կատարվում է սույն Հուշագրին:

Հոդված 8
Ճանապարհածախսը

Որպես ընդհանուր կանոն, Գերատեսչություններից յուրաքանչյուրը մյուս Գերատեսչություն այցելության համար ինքն է հոգում ամբողջ անձնակազմի ճանապարհածախսն ու օրապահիկը, եթե այլ բան նախատեսված չէ:

Հոդված 9
Ֆինանսավորումը եւ միջոցները

1. 3-րդ եւ 4-րդ հոդվածների համաձայն բոլոր գործողությունները ֆինանսավորվում են արտաքին միջոցների հաշվին, եթե Գերատեսչությունների միջեւ այլ համաձայնություն չկա: Ոչ մի գործողություն չի նախաձեռնվում, քանի դեռ այդպիսի ֆինանսավորումը չի հաստատվել կամ քանի դեռ Գերատեսչությունները չեն համաձայնվել առ այն, որ արտաքին ֆինանսավորում չի պահանջվում: Գերատսչությունները համագործակցում են Փոխըմբռնման հուշագրին վերբերող գործողությունների կատարման համար արտաքին միջոցներ տրամադրելու հարցում:
2. 3-ից 7-րդ հոդվածներում նշված հատուկ միջոցները, ինչպես նաեւ համագործակցության

բովանդակությունը եւ ժամանակահատվածը սահմանվում են Գերատեսչությունների միջեւ կնքվող առանձին անհատական համաձայնագրերով, եթե այլ բան նախատեսված չէ:

Հոդված 10
Փոխըմբռնման հուշագրի դադարեցումը

1. Սույն Փոխըմբռնման հուշագիրը դադարեցվում է.
   եթե ՄՍԳ-ն ՊԱԲ է ներկայացնում գրավոր ծանուցում՝ Փոխըմբռնման հուշագրի դադարեցման մասին, կամ
   եթե ՊԱԲ -ն ՄՍԳ է ներկայացնում գրավոր ծանուցում՝ Փոխըմբռնման հուշագրի դադարեցման մասին:
2. Սույն Փոխըմբռնման հուշագրի դադարեցումը (1) մասի համաձայն ուժի մեջ է մտնում կողմերից մեկի գրավոր ծանուցումն ստանալուց վեց (6) ամիս հետո, եթե այդ ծանուցման մեջ այլ թվական նշված չէ կամ եթե երկու կողմերը ավելի կարճ ժամանակահատվածի վերաբերյալ չեն համաձայնվել:

Հոդված 11
Ուժի մեջ մտնելը

1. Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրը:
2. Ստորագրված է Ժնեւում, 22.09.2008 թվականին, լիտվերեն, հայերեն եւ անգլերեն լեզուներով, երկուական օրինակով, ընդ որում, բոլոր տեքստերն էլ բնօրինակ են: Կողմերի միջեւ տարաձայնությունների դեպքում հաշվի է առնվում անգլերեն տեքստը:

ՊԱԲ կողմից

Պարոն Ռիմվիդաս Նաույոկաս
Տնօրեն

ՄՍԳ կողմից

Պարոն Արմեն Ազիզյան
Գործակալության պետ